Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 11-ի N 1070 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, այսուհետ՝ ՊՈԱԿ) շահույթի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. ՊՈԱԿ-ի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

3. ՊՈԱԿ-ի հաշվետու տարվա շահույթն օգտագործվում է հետևյալ ուղղություններով և համամասնությամբ՝

1) կուտակման պահուստ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 50 տոկոսի չափով, որը կարող է ուղղվել ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման, դրանց կապիտալ վերանորոգման և արդիականացման նպատակներով.

2) սպառման պահուստ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 35 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. խրախուսում (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի),

բ. դրամական պահանջների բավարարում և հատուցումներ (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 20-րդ գլխի).

3) կարողությունների զարգացման պահուստ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 15 տոկոսի չափով:

4. ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը (ձևավորված չլինելու դեպքում՝ լիազորված պետական մարմինը), հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետը, մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը սահմանում է հաջորդող հաշվետու տարվա շահույթի օգտագործման ուղղությունները:

5. ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը (ձևավորված չլինելու դեպքում՝ լիազորված պետական մարմինը) կարող է հիմնավորված անհրաժեշտության դեպքում վերաբաշխել սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահուստի չափը՝ պայմանով, որ յուրաքանչյուր պահուստի գծով վերաբաշխվող կրճատումը չգերազանցի նախատեսված չափի 15 տոկոսը, իսկ ավելացումը՝ 30 տոկոսի չափը:

6. Անհրաժեշտությունից ելնելով, լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, հաջորդող 3 հաշվետու տարիների ընթացքում վերականգնելու պայմանով՝ հաշվետու տարվա ընթացքում սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահուստում կուտակված գումարները կարող են ուղղվել ՊՈԱԿ-ի հրատապ համարվող՝ սույն կարգով չնախատեսված ծախսերի նպատակով՝ պահպանելով սույն կարգի 2-րդ կետի պահանջը:

7. Հաշվետու տարվա ընթացքում սույն կարգի 3-րդ կետով սահմանված նպատակներով պահուստների չծախսված միջոցները կարող են ծախսվել հաջորդող տարում՝ պահպանելով իրենց նախնական նպատակայնությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ